[1] Դուրս գրման ամսաթիվ		
31	Հուլիս	2019 թ.
[4] Առաքման ամսաթիվ		
31	Հուլիս	2019 թ.

Հաշիվ ապրանքագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

[2] Սերիա	[3] Համար
Բ	7349507039

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի

Սերիա	Համար

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ

Պայմանագիր

[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Արտադրանք, ապրանք առաքող անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	6	9	0	2	0	8	7

[9] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[10] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ N 1570015001210100
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[12] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[13] Լրացուցիչ տվյալներ	

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3

[15] Անվանումը (ֆիզիկական անձի անուն, ազգանուն)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ	
[16] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխակատազմի գործառնական վարչություն	N 900011000834
[17] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	
[18] Լրացուցիչ տվյալներ		
[19] Ում միջոցով	Անուն, ազգանուն	
	Լիազորագիր / Համար	
	Ամսաթիվ	
[20] Մատակարարման (առաքման) եղանակը		
[21] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	

[22] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 55155419 բ/գ.	հատ	1	39400	39400
Ընդամենը					39400

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անուն, ազգանուն)

Ստացող
(անուն, ազգանուն)

31/07/2019 11:15:06

ՈՐՈՇՈՒՄ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

17 հունիսի 2019թ. ք.Ալավերդի

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ Ա.Ս.Մնացականյանս, վերանայելով վարույթիս թիվ 55155419 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2019 թվականի ապրիլի 7-ին Ռիմա Վարոսյանի կողմից ՀՀ ոստիկանության Թումանյանի բաժնում տրված հաղորդման կապակցությամբ նախապատրաստված նյութերով տվյալներ են ձեռք բերվել, որ նույն օրը՝ ժամը 14-ի սահմաններում, Կամո Ժորայի Վարոսյանն Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի 2/29-51 հասցեի իրենց բնակարանում կենցաղային հարցերի շուրջ վիճաբանել է մոր՝ Ռիմա Վարոսյանի հետ, որի ընթացքում Կամո Վարոսյանը Ռիմա Վարոսյանին մարմնական վնասվածք պատճառելու դիտավորությամբ գրկել և գցել է գետնին՝ պատճառելով առողջության ծանր վնաս՝ ձախ ազդրոսկրի միջտրոմբիոնային փակ կոտրվածք:

Դեպքի առթիվ 2019 թվականի ապրիլի 17-ին ՀՀ ոստիկանության Թումանյանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 55155119 քրեական գործը և այն նախաքննություն կատարելու նպատակով ուղարկվել Թումանյանի քննչական բաժին:

2019 թվականի ապրիլի 15-ին Արմինե Թամազյանի կողմից ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնում տրված հաղորդման կապակցությամբ նախապատրաստված նյութերով տվյալներ են ստացվել այն մասին, որ Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ 3/3-15 հասցեի բնակիչ Կամո Ժորայի Վարոսյանը 2019 թվականի ապրիլի 12-ին՝ կեսօրին, մետաղյա դետալով դռան փականը բացելու միջոցով, ապօրինի մուտք է գործել նույն քաղաքի Սանահին Սարահարթ 2/7-7 հասցեում գտնվող՝ Արմինե Սերյոժայի Թամազյանին պատկանող բնակարան, որտեղից գաղտնի հափշտակել է վերջինիս պատկանող՝ 7.500 ՀՀ դրամ արժողության արբանյակային ալեհավաքի ընդունիչ սարքը:

Դեպքի առթիվ 2019 թվականի ապրիլի 25-ին ՀՀ ոստիկանության Թումանյանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով հարուցվել է թիվ 55155419 քրեական գործը, որը նախաքննության կատարման համար ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժին:

2019 թվականի մայիսի 27-ին որոշում է կայացվել թիվ 55155119 և 55155419 քրեական գործերը մեկ վարույթում միացնելու և նախաքննությունը թիվ 55155419 համարով շարունակելու մասին:

2019 թվականի մայիսի 30-ին Կամո Վարոսյանի նկատմամբ խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:

2019 թվականի հունիսի 6-ին Կամո Վարոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ինմասով և 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով՝ այն բանի համար, որ նա 2019 թվականի ապրիլի 7-ին՝ ժամը 14-ի սահմաններում, իր բնակության՝ Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի 2/29 շենքի 51-րդ հասցեի բնակարանում տան գույքը վաճառելու և պարբերաբար ալկոհոլ օգտագործելու համար վիճաբանել է մոր՝ 1934 թվականի մայիսի 5-ին ծնված Ռիմա Հակոբի Վարոսյանի հետ, որի ընթացքում Կամո Վարոսյանը Ռիմա Վարոսյանին մարմնական վնասվածք պատճառելու դիտավորությամբ գրկել և գցել է հատակին՝ պատճառելով առողջության ծանր վնաս՝ ձախ ազդրոսկրի միջտամբիոնային փակ կոտրվածք:

Բացի այդ, Կամո Վարոսյանը, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, 2019 թվականի ապրիլի 12-ին՝ կեսօրի սահմաններում, օգտվելով Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ 2/7 շենքի 7-րդ հասցեի բնակարանի մուտքի դռան փականի բացակայության հանգամանքից՝ մետաղյա դետալի գործադրմամբ բացել է դուռը, ապօրինի մուտք գործել բարեկամի՝ Արմինե Թամազյանին պատկանող հիշյալ բնակարան, որտեղից գաղտնի հափշտակել է խոհանոցի պահարանի վրա դրված, Արմինե Թամազյանին պատկանող, զգալի չափերով՝ 7.500 ՀՀ դրամ արժողության «OPENBOX» տեսակի, «X-800» մոդելի թվային ալեհավաք-ընդունիչ սարքը /տյուները/:

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ Կամո Վարոսյանը ֆիզիկապես վատառողջ է՝ տառապել է «Օրգանական կոգնիտիվ խանգարում խրոնիկական ալկոհոլիզմի հետևանքով գիտակցության դելիրոզ և փսիխոտիկ խանգարումներով անամնեզում» և «Հոգեկան և վարքային խանգարումներ ալկոհոլի գործածման հետևանքով» հիվանդություններով:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Կամո Վարոսյանի հոգեկան վիճակի, նրա մոտ հոգեկան հիվանդության առկայության, մեղսունակության հարցը և գործի համար նշանակություն ունեցող այլ հարցեր պարզաբանելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-244 և 248 հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՈԲ ընկերության փորձագետներին:

2. Փորձաքննության ներկայացնել սույն որոշման օրինակը, իսկ քրեական գործի նյութերը և Կամո Վարոսյանը կներկայացվեն փորձաքննության անցկացման օրը:

3. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Կամո Վարոսյանը քրոնիկ հոգեկան կամ այլ հոգեկան հիվանդությամբ տառապել կամ տառապում է, թե ոչ, եթե այո ապա ինչպիսի:

բ/ Եթե Կամո Վարոսյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ կամ ունեցել է հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարում, ապա վերոհիշյալ դեպքերից յուրաքանչյուրի կատարման պահին դրանք զրկել են նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակություններից, թե ոչ:

գ/ Վերոհիշյալ դեպքերից յուրաքանչյուրի կատարման պահին Կամո Վարոսյանն ունեցել է արդյոք հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարում, թե ոչ:

դ/ Վերոհիշյալ դեպքերից յուրաքանչյուրի կատարման պահին Կամո Վարոսյանը եղել է արդյոք մեղսունակ, թե ոչ, նա հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ:

ե/ Կարելի է արդյոք արժանահավատ համարել Կամո Վարոսյանի կողմից տրված ցուցմունքները:

զ/ Իր հոգեկան վիճակով պայմանավորված՝ Կամոն Վարոսյանն ի վիճակի է մասնակցել դատաքննչական գործողություններին, թե ոչ:

Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

4. Փորձագետներին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ,
արդարադատության երրորդ դասի խորհրդական՝ Ա.Մնացականյան